

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆ



ՀԱՅՈՑ ԴԵՐԸ
ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՀՐԱՎԵԱՆ ԱԹԱՎԵԱՆ

ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Մեկնասությամբ


*Արմեն և Բերսարե Շերեժեան հիմնադրամի
-ԱՍՆ-*

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՌԻՏՈՒՏ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅՈՑ ԴԵՐԸ^Հ
ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ
ՄԵՋ

4 ՀՀ
857762



ԵՐԵՎԱՆ 1999

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

ԴՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63.3(24)52
Ա 501

Խմբագիր՝ Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Աճառյան Հ.
Ա 501 ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ.
-Եր. Զանգակ-97, 1999.- 24 էջ

Ակադ. Հր. Աճառյանի սույն աշխատությունը ուրվագծում է այն նշանակալի տնտեսական, քաղաքական ու մշակութային ծառայությունները, որ հայերը մատուցել են թորքական կայսրությանը՝ գերազանցապես XVIII-XIX դարերի ընթացքին:

Հեղինակի նպատակը միայն հայ երախտավորների անունները հիշեցնելը չէ, այլ նաև՝ թելադրել այդ մարզում կատարելիք աշխատանքի կարևորությունը: Այս կարգի նյութերի հրատարակությունը կարող է նպաստ բերել հայկական իրողությունները ճանաչելու գործում քուրք մտավորական-ների նվազուն փորձերին:

U 0503020913
0003(01)-99

ԳՄԴ 63.3(24)52

ISBN 99930 - 2 - 077 - X

947.925

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

HRACHIYA ACHARYAN

*THE ROLE OF
ARMENIANS
IN THE OTTOMAN EMPIRE*



YEREVAN 1999

*This Publications was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.
- USA -*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պրոֆ. Էդ. Աղայանի տեղեկությամբ «Այս թեմայով հաճգույցալ Հրաչյա Աճառյանը զեկուցում է կարդացել Երևանի պետական համալսարանի գիտական նստաշրջանում 1943թ.: Նա մտադիր էր հետազայում ընդարձակել այդ զեկուցումը և դարձնել մեծագործություն, քայլ հնարավորություն չունեցավ»: Անվանի հայագետի մահից (1953) տաս տարի անց՝ Էդ. Աղայանը «մտածելով, որ այս փոքրիկ հաղորդումը կարող է օգտակար լինել տվյալ հարցով գրադիտմերին», այն հրատարակության է ներկայացնում «Պատմա-քանասիրական հանդեսին», «կատարելով միայն մասնակի ոճարանական շտկումներ»:

Հանդեսի խմբագրությունը ի ձեռն պատասխանատու քարտուղարի կատարում է զգուշավորական-զաղափարական բավական նկատելի կրծատումներ և առ ի տպագրություն կարծիքի ներկայացնում ակադ. Աշոտ Հովհաննիսյանին:

Պահպանվել է գրախոսի ձեռագիր առաջարկը. «Հր. Աճառյանի սույն հոդվածը հետաքրքրական է և արժեքավոր: Նրա համառոտակի փաստագրությունները հետազայում իրոք որ կարող են առիթ տալ ավելի ընդարձակ կոլտուր-պատմական հետազոտումների ու ճշգրտումների: Պետք է տպագրել վերականգնելով մի շարք անհարկի կրծատումները: Միայն 8-րդ էջում առաջարկում են կրծատել իննը տող, որոնք հիմնավորված չեն թվում ինձ և կարող են դիմում բուրքերի ազգային ինքնասիրությանը: 1964, փետր. 5»:

Թյուրիմացության տեղ չտալու համար ասենք, որ Ա. Հովհաննիսյանի առաջարկած իննը տողը վերաբերվում է բացառապես

Ֆուադ և Ալի փաշաների մտալրությանը՝ արաբական գրերի փոխարեն պաշտոնական զործածության ընդունել հայկականը:

Ինչպես երևում է, «Պատմա-քանայիրական հանդեսի» խմբագրությունում Հր. Աճառյանի հոդվածի տպագրության վերաբերմամբ միասնական կարծիք չի գոյացել, ուստի «իմրագրված» օրինակը գրախոսի լուսանցագրություններով ու օժանդակ այլ նյութերով մնացել է անտիպ նյութերի մեջ:

1967թ. ակադ. Մ.Գ. Ներսիսյանի նախաձեռնությամբ ու ակադ. Էդ. Աղայանի խմբագրությամբ հրատարակվել սկսեց «Քանրեր Երևանի համալսարանի» հանդեսը, որի առաջին խոկ համարում (էջ 157-163) տպագրված է Հր. Աճառյանի այս հոդվածը: ՊԲՀ-ի առաջարկած կրծատումների մեծ մասը այստեղ կատարված է, կան և մասնակի նոր կրծատումներ, սակայն կարևորը միայն այդ չէ. պարզվում է՝ հեղինակային ձեռագիրը տպագրության պատրաստելիս բնագրային մի քանի էջ վրիպել է ուշադրությունից (քերևս բողոքներում առանձին գտնվելու պատճառով):

Ինչպես երևում է՝ զրբերը չէ, հոդվածներն իւ ունեն իրենց ճակատագիրը: Տասնամյակներ անց առաջին անգամ աշխատանքը լույս է տեսնում ամրողությամբ ու առանց անհարկի միջամտության: Հատուկ ամունների գրության մեջ նկատելի է արևմտահայ արտասանության հետքը: Հեղինակային ձեռագրի հետ բաղդատությունը կատարել է Հր. Աճառյանի դուստրը՝ Քնարիկ Աճառյանը:

Հոդվածում շոշափված հարցերից մի քանիսի շուրջ այժմ կան ընդարձակ, նոյնիսկ մենագրական աշխատանքներ, սակայն հարցադրման ամփոփությամբ մեծ հայագետի ակնարկը անպահպանում է իր այժմեականությունը:

ՊԱՐՈՒՅՐ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՅ ԴԵՐԸ ՕՍՍԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Թուրքիան, եթք Օսմանյան կայսրություն էք, վեց հպատակ ազգ ունեք. արաբները, քրդերը, հայերը, հույները, բուլղարները և ալբանացիք: Արաբները՝ որոնք նույնիսկ տիրող թուրքենից էլ թվով ավելի էին (9 միլիոն), թեև կուլտուրական ժողովուրդ, բայց առանձնացած իրենց երկրում (Իրաք, Ասորիք, Արաբիա), չէին խառնվում երկրի և պետության ընդհանուր վարչական գործին: Արևելից քրդերը և արևմուտքից ալբանացիք (ամեն մեկը 2 միլիոն ժողովուրդ) անզրագետ և անուսում լինելով՝ պարապում էին միայն իրենց երկրում խաշճարածություն անելով: Բուլղարները նույնպես իբրև երկրագործ ժողովուրդ՝ իրենց երկրի սահմաններում միայն ապրում էին և վարչական կյանքում գործ չունեին: Մնում էին միայն հույները և հայերը, որոնք նույնիսկ մայրաքաղաքում (Պոլիս) մեծ թիվ էին կազմում և միասին 400.000 շունչ էին: Պոլիսը ուներ մի միլիոն բնակիչ, որից 500.000 թուրք, 400.000 հայ և հույն, 100.000 հրեա և եվրոպացի: Բայց հույներն էլ պետական լեզվին ընդհանրապես անտեղյակ մնալով՝ չէին կարողացել պետական ու վարչական ասպարեզում դեր ունենալ: Միայն հայերն եղան, որ լավ տիրապետելով տաճիկ լեզվին, վարչական բարձր պաշտոնների հասան և մեծ դեր ունեցան բոլոր ասպարեզներում:

Հին պետական հայ պաշտոնյաները ամիրաներն էին եղած: Սրանց ժագումը այսպիս եղավ. պետությունը նշանակում էր իրեւ կառավարիչ մի բուրք փաշա, սա էլ տուրքերի հանձնման իրեւ երաշխավոր նշանակում էր հայ սեղանավոր, որ պալատի ծախսերը հոգում էր և վճարելի տուրքին ի հաշիվ գրելուց հետո, ինքը անձանք հավաքում էր տուրքերը ժողովրդից: Ամիրաները մեծ մասամբ ներքին գավառներից էին լինում և իրեւ երկրի ամենից ազդեցիկ մարդերը՝ մասնակից էին բոլոր ազգային գործերին: Պատրիարքը և ազգային վարչությունը նրանց ձեռքն էր: Ամիրաները շատ անգամ անարժան են գտնված իրենց կոչումին, բայց նրանց մեջ եղել են նաև օգտակար անձեր: Հիշենք Սեղրոս ամիրա վաճառականապետը (1720-ական թվերին), Ընորիք ամիրա՝ շնորհալի անձ, որ առաջին անգամ 1790թ. բաց արեց Պոլսի զանազան թաղերում առաջին հայ վարժարանները և մի դպրոց էլ աղջկանց համար, Սկրտիչ ամիրա Շեղայիրյան, որ հիմնեց Խասգյուղի Ներսիսյան վարժարանը և նվիրեց նրան 100.000 դրամ, Թերզյան Արքահամ ամիրա, որ 1824-ին Հասան փաշա խանի մեջ տպարան հաստատեց և իր տպած գիրքը ձրիաբար բաժանում էր գավառներում:

Ժթ դարում սեղանավորության և պետական կապալի անունով երկրի ելամտական մասը ամբողջապես հայոց ձեռքն էր: Ընդհանուր մաքսային հասույթը հանձնված էր Տյուզյան Հովհաննես Չելեբիին, հետո Շեղայիրյան Սկրտիչ ամիրային: Վառողապետությունը ժառանգաբար Տատյանց ձեռքն էր՝ սկսած 1795 թվից: Առաջին անգամ սուլթան Մելիմի ժամանակ (1792թ.) Ազատլի վառողապետ նշանակվեց Տատյանց Առաքել աղան, որ իրենից հնարիեց ճարտարագործ չարիսեր: Առվան Մելիմը մեծ պատիվներ շնորհեց Առաքել աղային նրա հնարած այս մեքենայի և նրա պատրաստած լնտիր վառողի համար: Տալով հատուկ սեյմեններ՝ 48 զյուղի վրա դատավոր նշանակեց: Իր չարիսերով Առաքելը տարե-

կան 10.000 քվինտալ վառող էր պատրաստում՝ անգլիական և հնանդական վառողի որակով. հարկավոր դեպքում կարելի էր այս քանակը էլ ավելի բարձրացնել. սրա համար էլ մյուս բոլոր գործարանները (Սելանիկ և Կելիպոլի) փակվեցան, և վառողապետությունը Տատյան տոհմին մնաց: Բաճակի հացի մատակարարությունը Նորատունկյաններինն էր: Փողերանոցը հանձնված էր Տյուզանց, որոնք առաջ արքունի պալատի ուլերչապետն էին: Երբ սրանք գողության մեջ կասկածվելով զիսատվեցին, փողերանոցը հանձնվեց Պեղճյան Հարություն ամիրային (ծն. 1771): Տաս տարուց ավելի ծառայեց ամենամեծ հավատարմությամբ և արժանացավ կայսեր ամենաբարձր շնորհներին: Հայ ազգի և տերության ամենամեծ բարերարն է: Ինքը իհմնեց Պոլսի Հայոց Ազգային հիվանդանոցը, Վերաշինեց Մայր Եկեղեցին, Պատրիարքարանը, Պեղճյան դպրոցը, Քում-քափուի Եկեղեցին և երկու դպրոցները, արքունի նավարանի Եկեղեցին, Բերայի աղջկանց դպրոցը, Մայր Եկեղեցու դպրոցը, Քարքալի դպրոցը, Եկեղեցին և աղբյուրը, բացի սրանցից կտակով ապահովել է Քում-քափուի դպրոցները, Օքազուլի Եկեղեցու 100.000 դրամ պարտքը վճարել է, օգմել է Զանաքալեի, Կելիպոլիի, Էտիրնեի, Մալկարայի Եկեղեցիներին, Պոլիսի աղքատներին նվիրել է 100.000 դրամ ևն: Երբ 1828-ին Ռուս բանակը Պոլսի հասավ և 15 միլիոն ռուբլի պատերազմական տուգանք էր պահանջում, հակառակ դեպքում մայրաքաղաք Պոլիսը գրավելու սպառնալիքով, սուլթան Մահմուդը շվարած չգիտեր ինչ անել, որովհետև ոչ դրամ կար տուգանք վճարելու համար, ոչ զինվոր կար կրիվը շարունակելու համար: Պեղճյանը փրկեց Օսմանյան կայսությունը: Նա մտածեց մի նոր հնարք և փողերանոցում գտնված հին արծաթները հալելով և մեծ մասը պղինձ խառնելով՝ գիշեր-ցեղեկ աշխատեց և կտրեց հինգնոց-վեցնոց կոչված դրամները, որ հրապարակ հանեց և ժողովուրդի ուլին հավաքելով՝ տուգանքը

Վճարեց: Դեպքը այսպես են պատմում. Պեզճյանը այնքան մեծ ծառայություններ էր մատուցել պետությանը, որ սովորանը շնորհել էր իր մոտ ազատ մուտք ունենալու իրավունքը: Մի անգամ Պեզճյանը մտնում է սովորանի մոտ. տեսնում է նրան տիսուր ու մտախոհ, հարցում է. «Սովորան, քեզ տիսուր եմ տեսնում այսօր. ի՞նչն է տիսրությանդ պատճառը»: Սովորանը պատասխանում է. «Գնա՛, Արքին, շատ եմ բարկացած, գնա՛»: «Խնճռում եմ, սովորան, ասա ծառայիդ քո տիսրության պատճառը, թերևս ես կարողանամ ճար գտնել նրան»: «Տիսրությունս անդարձմանելի է. հեռացիր Արքին. գուցե բարկությանս պատճառով մի վատ հրաման տրվի քեզ դեմ»: Պեզճյանը ընկնում է սովորանի ոտքը և խնդրում է, որ ասի: «Ուստի 15 միլ. ռուբլի տուգանք են ուզում. ապա թե ոչ Պոլիս պիտի մտնեն ու մայրաքաղաքս գրավեն»: «Այ՞դ է քո տիսրության պատճառը»:

✓ Պեզճյանը սովորան Մահմուլի աջ բազուկն ու աչքի լույսն էր. երբ Պեզճյանը ջրգողությամբ հիվանդացավ, մեռավ, սովորանը երկու սենեկապետի հետ ծպտված եկավ նրա հուղարկավորության՝ վերջին անգամ տեսնելու իր սիրելու դեմքը:

բայց Հովհաննես թեյ Տատյան՝ Բեյքողի թղթի գործարանի վերատեսուչ, Եյուպի մանաժի գործարանի տեսուչ և Ազատլի վառողապետ նշանակվեց: Կառավարության ծախսով երեք անգամ Եվրոպա ուղարկվեց արհեստագիտությունը, հատկապես վառողի պարաստությունը ուսումնասիրելու համար: Վերադարձին հնարեց հրացանի երկարները ծակելու մի մեքենա, իր պատրաստած վառողը շատ բարձր գնահատվեց ֆրանսիացի և անգլիացի գորապետների կողմից՝ 1856-ի Ղրիմի պատերազմի ժամանակ: Իր վերակացությամբ շինվեցին Բեյքողի կաշիի գործարանը, Նիկոմեդիայի չուխայի գործարանը, Հերեքեկի մետաքսի գործարանը, Զեյթին բուրնուի երկաք ձուլելու և ջրի գործարանները:

Արքունի ճարտարապետությունը հանձնված էր Սերվերյան Շանկլ ամիրային, իւսո՞՝ Պայյանների նշանավոր ցեղին ժառանգաբար: Նիկողոս Պայյանը ուղարկվեց Փարիզ և ի դարձին շինեց Դոլմա բախչեի պալատը, որ Պոլսի ամենագեղեցիկ զարդն է կազմում:

1861թ.-ին սուլթան Մեծիսի տեղ գահ նստեց սուլթան Ազիզը, որ շինել տվեց Զրադանի, Բեյլեքեի և Վոսփորի երկու եզերքների պալատները, գրանցները, զինվորական վարժարանները ևն: Այս բոլոր Պայյանների ձեռակերտն է: Երբ ասում եմ հայոց ձեռակերտն է, պետք է հասկանալ այն իմստով, թե ճարտարապետը հայ է... Նրանցն է նաև Պոլսի 200 ոտք բարձրությամբ հրդեհի աշտարակը, Գալաքա սարայը, Պենտերը, Սառայ բուրնուի պալատը ևն: Պենտերը մի բառ էր ասացի և անցավ, բայց, թե ինչպիսի հոյակերտ աշխատանք է.

Արքունի նկարիչներն էլ ընդհանրապես հայ էին: Այստեղ նկարիչ ասելով պիտի հասկանանք զիսատրապես զարդանկարիչ, որովհետև դեմքի նկարչությունը արգելված էր մահմեդականների մոտ:

Որովհետև տաճկական փառասիրությունը չէր բողնում նախարարությունները ամբողջովին հայոց հանձնել, ուստի տաճկական կառավարությունը մտածեց ամեն նախարարի մոտ մի հայ դմել իր խորհրդատու կամ օգնական, բայց իրոք բուն վարիչ: Այսպես՝ Ռեշադ փաշայի մոտ՝ Կոճիկյան, ծովակալ Մեհմեդ Ալի փաշայի մոտ՝ Հովսեփ Վարդան փաշա, Եպարքոս Ալի փաշայի մոտ՝ Համանճյան և Սեֆերյան, Ֆուադ փաշայի մոտ՝ Սերվիչեն և Սահակ Աբրո, Մահմուտ Նելիմ փաշայի մոտ՝ Արթին փաշա Տասյան, Ջեվդեթ փաշայի մոտ՝ Վահան Էֆենդի, Միհետար փաշայի մոտ՝ Օսյան Գրիգոր Էֆենդի, Խնիլեզ Սայիդ փաշայի մոտ՝ Նուրյան, Սերվեթ փաշայի մոտ՝ Կոստանդ փաշա, մյուս Սայիդ փաշայի մոտ՝ Աղաբեզզյան Սարգսի Էֆենդի:

Կայսերական անձնական գանձի նախարարությունը միշտ հայոց ձեռքն է եղել («անձնական գանձի նախարարություն» ասելով պիտի հասկանանք սուլթանի անհատական հարստությունը), ինչպես՝ Հակոբ փաշա Բեզեզյան, Միքայել փաշա Փորթուքայան և Հովհաննես Սաքըզ փաշա, մինչև իսկ ջարդարար և հայատյաց սուլթան Համիդի օրով: Ելանտական նախարարությունը իր ամենից տագնապալի վիճակում հանձնվեց Բեզեզ Հակոբ փաշային, իսկ շատ անգամ խորհրդական էին Տատյանը և Փորթուքայանը: 1864թ.-ին Գրիգոր Եֆենդի Աղաքոն ֆրանսիայից Պոլիս դարձավ. Օսմանյան հեռագրական, քղբատարական և հանրային շինությանց վարչությունները շատ վատ վիճակում էին. այս երեք նախարարությունները իրեն հանձնվեցին, և հիշյալ մեծանուն պետական գործիչը ամեն բան կարգի ու կանոնի դրավ, և այնուհետև տաճիկները նրա արածի շարունակությունն էին վայելում:

Խայտ. Արքունի բժշկական համալսարանը կառավարված է մեծ մասմբ հայոց ժողովով. զիսավոր դասախոսներն եղել են Սերվիչեն, Նիկողայոս Ռուսինյան, Խնդամյան, Անդրանիկ պեյ Կոճիկյան, Ստեփան փաշա Ապանյան և այլն, Մյուս պետական վարժարաններում դասախոսել են Փորթուքալ փաշա, Թերզյան, Հ. Յուսուֆյան, Սիհրան Քարաքաչ, Հակոբ Բոյաջյան և այլն: Պետական պաշտոնադաններում հաշվապահության մեջ կրկնատոմարի դրությունը մոցրին Կարապետ Քարաքաչը, Խոդրյանը և Քույումջյանը: «Կրկնատոմարի դրություն» ասելով հասկանում ենք իտալական հաշվապահություն, որ այժմ ընդունված է ամեն տեղ: Սրա հիմնադիրներն ել հայերն են եղել՝ ջուղայեցի հայ Վաճառականները: Հարություն փաշա Տատյան արտաքին գործոց նախարարության հոգին եղավ և խորհրդական անունով իսկական վարիչն էր, այնպես որ՝ երբ Տատյանը կարծ ժամանակով իրաժարվեց, դեսպաններին ուղարկված պաշտոնական թղթերը ետ էին գալիս իբրև անհասկանալի:

Մի փոքրիկ բացատրություն այստեղ անհրաժեշտ է.

Համբաց և անտառաց վերատեսուչն էր Պետրոս Քույումջյանը, հանրային շինությանց նախարարության մեջ նշանակոր են Հովհաննես Զամիչը, Օտյանը, Մարկոսյանը, Ավաճյանը և անոնց 1864թ.-ին բացվեց Փանգալըի զինվորական վարժարանը (Հարրիե), միայն մահմեղականների համար. սուլքան Ազիզը հրամայեց ընդունել իբր փորձ միայն իինձ հայ (Գարրիել Էքսայան, Կարապետ Բարաղամյան, Սիմոն Տատյան, Հովհան և Սինարյան), որոնց մինչև զորապետության բարձրացնելու միտք ունեին: Բայց հետո այս մտքից հրաժարվելով՝ հարյուրապետության աստիճանի մեջ պահեցին: Սրանք առաջին և վերջին զինվորականները եղան:

Ուս-տաճկական պատերազմի ժամանակ՝ տերությունը քրիստոնյաներից էլ զինվոր պահանջեց. հույները մերժեցին, Հայոց Ազգային երեսփոխանական ժողովում ծագեց մեծ վեճ. Իզմիրյանը և Նար-Բեյը բոլորովին հակառակ կանգնեցին, ասելով թե ընդհանուր զինվորագրությունը պահանջում է պետության մեջ հավասարություն. մեր պետության մեջ հավասարություն չկա, ինչպես կարող ենք պետությանը զինվոր տալ. Զաղաքագետ Ներսէս պատրիարքը ընդունեց զիսահարկի փոխարեն զինվոր տալ, բայց այն պայմանով, որ հայերը թուրք զինվորների հետ չխառնվեն, այլ առանձին գումար, առանձին դրոշակ և առանձին զորապետ ունենան: Պետությունը՝ որ Լազարեն ու Տեր-Դուկասովը աչքի առաջ ուներ, վախեց, և զինվորագրությունը մնաց: Այսպիսով՝ հայերը զինվորական ասպարեզ մուտք չգործեցին դժբախտաբար:

1863 թվին, երբ հայերը դրոշակներով զարդարված 20 շոգենավերով և նվազածությամբ շնորհակալություն էին հայտնում եպարքու Ալի փաշային իր Բերեքի պալատի առաջ՝ սահմանադրության հաստատության համար, եպարքոսը իր մի բարեկամին դառնալով

ասաց. «Ես պոռոտախոս հոյներից չեմ վախենում, այլ հայերից, ո-
րոնք լրիկ-մնջիկ գործում են և բուրք ժողովրդի հետ սերտ շփման
մեջ են. վախենում եմ, որ սրանք մի օր տաճկաց միանալով հեղա-
փոխություն անեն երկրի մեջ»: Այսպես էր մտածում նաև եպարքու
ֆուադ փաշան, որ իր վերջին կտակում շեշտել էր ուշադիր լինել
հայոց վրա առանձնապես: Իսկ մեծ եպարքու Սիրիաթ փաշան, որ
զաղափարական մարդ էր և հասկանում էր, թե ժողովրդական
շարժման և ազատական հոսանքի առաջն առնել անկարելի է,
1876թ.-ի Օսմանական սահմանադրությունը հորինված ժամանակ
մտածում էր, թե երբ ազատությունը տիրի երկրում, ամենից ավելի
հայերը պիտի շահեն, բայց քուրքերին էլ իրենց հետևից պիտի քա-
շեն, և սրանք միշտ իբրև բազմաթիվ և տիրող տարր կարողանան
առաջնակարգ դեր ունենալ:

1876 թվի Օսմանյան սահմանադրությունն էլ հայերի օրինա-
կով է. Սիրիաթ փաշայի խորհրդականը Գրիգոր Օտյանն էր. հայոց
սահմանադրության հիմնադիրներից մեկը նույն ինքը Գրիգոր Օ-
տյանն է՝ Ռուսիանի և այլոց հետ: Իրենց ամենօրյա առանձնա-
կան խոնսակցությանց մեջ Ստեփանոս համոզում էր Սիրիաթ փաշա-
յին սահմանադրություն ընդունելու, ասում են նույնիսկ, թե կա
տաճկաց օրինագրքի սրբազրությունը Սիրիաթ փաշայի ձեռքով՝
թելադրված Օտյանի միջոցով:

Երբ հաստատվեց սահմանադրությունը և Օսմանյան երեսփո-
խանական ժողովը կազմվեց, քողմենք պոլսեցի հայերը, որոնք Հա-
յոց Ազգային ժողովում արդեն վարժված էին, այլև զավառացի ե-
րեսփոխանները (ինչպես Կարնո, Երզնկայի, Սեբաստիոն, Հալերի)
ապշեցրին կենտրոնը իրենց պերճախոսությամբ, լրջությամբ և շր-
ջահայաց տեսնողությամբ:

Արեւատների, երկրագործության, վաճառականության և

առևտուրների մեջ էլ հայերը մեծ դեր ունեցան: Կոչկակարուբյուն, ատաղձագործություն, որմնադրություն և հացագործություն զիսավորապես հունաց ձեռքն էր, բայց մյուս բոլոր արհեստները հայոց ձեռքն էին՝ սկսած ոսկերչությունից մինչև մեքենագործություն, սատափի վրա նուրբ բանվածքներ, փորագրություն: Ոսկերչության զարգացումը հայոց մեջ հետևյալ ձևով է կատարվել. Տյուզյան Միքայելը արքունի ոսկերիչ էր՝ սկսած սուլթան Մուսաքափա Գ-ից. ինքը լինելով լավ ճաշակի տեր՝ ֆրանսիայից բերել տվեց շատ նկարներ և արևելյան ճաշակին հարմարեցնելով՝ պատրաստում էր ընտիր քարեղաններ, ամաններ, ծաղիկներ և ան: Սուլթան Համիդ (1774-1789թ.) մեծ սեր ունենալով այդպիսի զարդեղնենների, շատ բան էր զնում նրանից և գործնականապես քաջալերում նրան: Տյուզյանը շատ հայերի սովորեցրեց արհեստը և այսպիսով ծաղկեցրեց ու տարածեց այդ արվեստը մեր մեջ (Դարապատում 1828, էջ 22): Ոսկերիչների շուկան Պոլսում ամբողջապես հայ է և այն էլ սամարժիացի հայ, և վարպետները սովորություն չունեին օտարազգի աշակերտ պահելու: Խավիշի վրա ոսկեթելով նուրբ ասեղնագործությունը (դիվալ), որ այնպես ընդհանուր տարածված էր Պոլսում, միմիայն հայ աղքատ կանաց մենաշնորհն ու նրանց ապրուստի գլխավոր միջոցն էր:

ԺԵ դարի վերջերը Պոլսի Գուգկունճուք քաղում մի հայ հնարեց եազմա կռչված բանը: Դա մի քառակուսի արշին մեծությամբ քարակ կտոր է, որի վրա նկարված են գոյնգգույն ծաղիկներ կամ զարդեր: Եազմաճին կտորը փռում է հատակին, ջրով թրջում, ձեռքի տակ ունի մի քանի գույնի ներկեր և մի քանի տեսակի փայտե կաղապարները քարախում է ներկերի մեջ և ձեռքով զգուշությամբ տպում շորի վրա: Այդ է եազման, որ ծառայում է առքատիկ կանանց իրեն զիսակապ: Շորը թեև քարակ, բայց դիմացկուն է, իսկ ներկերը դիմանում են թե՛ արկի և թե՛ լվացքի: Սի եազման արժեք



լնդամենը ութ կոպէկ և դիմանում էր մի քանի տարի: Գովզկունճութցի հայի գյուտը շուտով տարածվեց Պոլսում, դարձավ հայերի ձեռքին առանձին մասնագիտություն, իսկ մոտակա երկրների համար արտահանվող նյութ:

Երկրագործության մեջ հույները գործում էին Արշիպելագի կղզիներում՝ ձիբագործություն և այգեգործություն, իսկ բուն երկրագործությունը հայ գյուղացոց ձեռքն էր: Վաճառականությունը հայոց և հունաց ձեռքն էր, բայց հույները գրադպում էին ներածությամբ, այսինքն երկրի արյունն էին քամում, իսկ հայերը՝ արտածությամբ, այսինքն երկիրն էին հարստացնում: Սրանք Անատոլիայի և Սյուրբայի ապրանքները տանում էին Ֆրանսիա, Անգլիա և Ամերիկա: Շամփաները շատ վատ էին, երկարուղի կամ հաղորդակցության այլ միջոցներ չկային, ուստի հայոց արածը մարտիրոսություն էր, բայց նրանք վարժված էին ամենահին ժամանակներից և վաճառականությունը ուրիշ տեսակ չէին կարող ըմբռնել: Թուրքը վաճառական չէ եղած երբեք, այլ զինվոր կամ պաշտոնյա և ապրել է հայոց հարկերով, հայ ժողովրդի վճարած տուքերով:

Արվեստների մեջ հայոց մատուցած ծառայությունը անգնահատելի է: Էյուրի մանածի գործարանը հաստատող Առաքել անուն հայն էր, որ 1800-ական թթ. Վիեննայում սովորել էր մանածի մեքնաների շինությունն ու գործածությունը: Արքունի հրդեհաշեզ խմբի ջրհանները պատրաստեց Նիկողոս անուն սամաթիացի հայ արհեստավորը: Գավաֆյանը հնարեց ծովը վառելու նոր հունական հուր: Երբ տերությունը նրանից պահանջեց այդ գաղտնիքը, Գավաֆյանը մերժեց տալ, ասելով, թե նավամարտ եղած դեպքում պատրաստ է անձամբ գործադրելու: Սրա վրա տերությունը քունավորեց նրան, և գյուտը հեղինակի հետ կորավ:

✓ Ըերամաբությունը գրեթե հայկական արվեստ էր, և նրա հո-

գին եղավ Գ. Թորգոմյանը: Մայրաքաղաքի ամենանշանավոր բժիշկները հայեր են եղած. Ջյաթիբյան, Խորասանջյան, Փեշտիմալցյան արքունի և զինվորական հոչակավոր բժիշկներ էին. Էսմերյան Պոլսի ամենամեծ ակնարուժն եղավ: Թուրք բժիշկները բանի պետք եկած չեն: Զարմանալի պիտի թվա ձեզ, եթե ասեմ, որ «Ճաղիկ» պատվաստելն էլ հայոց գյուտն է եղել. ին ժամանակներից ծանոք էր այն Հայաստանում, պատվաստով շամիչի մեջ դնելով երեխաներին տալիս էին, որ կու տան, ապա փոխադրվեց Պոլսի, որ մտածեցին մաշկը ճեղքելով պատվաստել: Անգլիական դեսպանութիւն Լետի Սոնտակ կամ Սոնտեյն տեսնելով հայոց այս բժշկությունը, սիրտ արավ և 1718թ. Պոլսի Պելկրատ գյուղում պատվաստեց իր տղին: Հաջող արդյունքից խրախուսված՝ այն մտցրեց Անգլիա. Ուելսի դուքսը, Օրլեանի դուքսը հետևեցին իր օրինակին: 1769 թվին Ռուսաց քաղութիւն փորձ արեց իր Պողոս որդու վրա, ապա Մարի Թերեզան ևն, մինչև որ Շենները նույնի վրայից պատրաստեց իր պատվաստը:

Փաստաբանության մեջ էլ հայերը գերազանցեցին նույնակ տաճիկները. հոչակավոր փաստաբանների մեջ հիշատակելի են Վռամշապուհ Մանուկյանը և Գր. Չոհրապը: Լեզվին անտեղյակ լինելու պատճառով հույները փաստաբան չեն տված: 80-ական թվերին Պոլսում 300 հայ բժիշկ, նույնափ էլ փաստաբան կար:

Օսմանացոց մեջ առաջին անգամ քատրոն մտցնողները հայերն եղան. մինչև այն ժամանակ նրանք հեյյալ (ombre chinoise) միայն գիտեին (Հաջի Էյվարին Քարազյոզի խաղերը): Վարդովյանը, Բենգլյանը, Ռշտունին, Չափրաստյանը, Ֆասուլաջյանը և Մնակյանը հիմնեցին Պոլսում Գետիգ-փաշայի, Վեզմեջիկը և Քաղիքյոյի օսմանյան քատրոնները: Դերասանները՝ զիսավորապես, իսկ դերասանութիւնները՝ բացառապես հայ էին եղել, որովհետև թուրք կինը բեմ բարձրանալու իրավունք չուներ «Նամեհրամի»

պատճառով: Հույները մի դերասան անգամ չեն տվել թուրք թատրոնին: Զայնագրությունը տաճիկները հայերից սովորեցին. հայկական ձայնագրությունը, որի առաջին հեղինակը Բարա Համբարձում Լիմոնջյանն էր, 1768-1839թթ. մտավ նաև տաճիկների մեջ և հեղինակի անունով կոչվեց «Բարա Համբարձում նոթասը»: Գեղարվեստից վաժարանի ամենից հաջող աշակերտները հայերն են եղել: Կայսերական լուսանկարիչը հոչակավոր Արդուլահյան եղբայրներն են:

Առաջին տաճիկերեն լրագիրը՝ «Թաքսիմ» շաբաթաթերքը Ալեքսանդր Բլակ անուն ֆրանսիացին հիմնեց 1832 թվին, բայց բովանդակությամբ ոչինչ բան էր: 60-ական թվերին լրագրությունը շատ էր ծաղկած հայոց մեջ, որոնք բացի հայերեն թերթերից, ունեին նաև հայատառ թուրքերեն լրագիրներ՝ բրդախոս հայոց համար՝ ինչպես Կարապետ Փանոսյանի «Մյունատի» կամ «Մանզումի էֆքյար», Հովսեփ Վարդան Փաշայի «Մեջմուայի հավադիս»: Թուրքերը ընտիր մի թերթ չունենալով, շատերը հայերեն գրերը սովորեցին և «Մանզումե» ու «Մեջմուա» էին կարդում, ուր գտնում էին ելրոպական հեռագրեր, մտածված առաջնորդողներ և քաղաքական դրության լավ պատկերը:

Հայերեն տառերը լրագրության միջոցով տաճիկ գիտական բարձր խավի մեջ այսպես տարածվելով, փորձնականապես տեսան նրա սրանչելի պարզությունը և առավելությունը արաբական գրերի վրա: 1860թ.-ին Ֆուադ և Ալի փաշաները մտածել էին, տաճկական հանելուկային գրերը բռնել և պաշտոնական գրեր ընդունել հայերենը: Մեծ եպարքոս Մեշիդ փաշան սովորեց հայ գիրը, որպեսզի տարածի թուրքերի մեջ: Ասում են, թէ Օսմանյան երեսփոխանական ժողովում էլ նույնը ընդունված էր, բայց ազգային փառասիրությունը կամ ժողովի շուտ փակումը չթողեց կատարել այն:

Հայերը տաճիկների համար էլ քերքեր հրատարակեցին, ինչպես Հակոբ Պարոնյան՝ հայ անվանի երկիծաբանը՝ «Թեաթրօ» զավեշտաբերքը, Շեվահիրջյան և Ալեքսան Էֆենդի՝ «Իբրեթ» քերքը, Դր. Յուրյուցյան՝ «Սըլիհեթ» բժշկական քերքը, նույնպես Պողոս Պառնասյան, Տիրան Ջելեկյան եղել են իրենց գլխավոր խմբագիրները: 90-ական քվերին «Սարահ» պաշտոնաբերքի տերն ու տնօրինը կեսարացի Սիհրան Էֆենդի Նաքաշյանն էր:

Թուրքական հրատարակիչները, թարգմանիչները և գրաշարերը մեծ մասամբ հայ էին, քուրք տպագրական տառերը շինողն ու ձևողն եղավ Հովհաննես Մյուհենդիսյանը. այնպես որ՝ այսօր հրապարակի վրա եղած տառերը իր ձեռակերտն են, և քուրքերը օրինությամբ են հիշում իր անունը: Նա էր, որ պատրաստեց տաճկական «Թաալիք» գրերի երկու տեսակները՝ 16 punto նեսխի, և 80 տարեկան հասակում էլ 6 punto մանրիկ գրերը: Երևակայեցեք, քուրքերը, որ մինչև այն ժամանակ միայն մի տեսակ տառ ունեին, սրանով արդեն հարստացան տպագրական արվեստի մեջ: Մյուհենդիսյանն էր դարձյալ, որ առաջին անգամ Պոլիս քերեց երկարեւ մամուլ՝ Ամերիկայից: Ինքը մտցրեց գալվանիզմը, ստերեոտիպը, ցինկոգրաֆը ևն: 1844-1876 թվերին ինքը փորագրեց և տպեց տաճկաց պետության հրատարակած թղթադրամները, «Խայմե» ու «Քոնսոլիդ», մրցման մեջ գերազանցելով այն ֆրանսիացի արվեստագետին, որ տաճկական կառավարությունը հատկապես քերել էր տվել Եվրոպայից:

Մանկավարժության մեջ էլ հայերն եղան տաճկաց առաջնորդները, նույնիսկ տաճիկերեն լեզվի համար առաջին եվրոպական ոճով ու նոր մեթոդով դասագրքերը հայերը պատրաստեցին. այսպես՝ Սիհրան Աբիկյան, Ռեթիկ հոգա, Սարայիդարյան և Զեքի Կարապետյան, որոնց շինած դասագրքերը տաճկական դպրոցներում գործածության դրվեցին: Ռեթիկ հոգան, այնպիսի հմուտ տաճկա-

գետ էր, որ տաճիկ մոլլաները գալիս էին չոքում նրա մոտ և տաճկերեն սովորում: Միհրան Արիլյանը 50 դասագիրք է գրել՝ «Մութավվել սարֆի օսման»:

Մի ուրիշ արվեստ, որի մեջ հայերը նույնպես շատ առաջ գնացին, ժողովրդական բանաստեղծությունն էր (աշուղ): Այս արվեստում հայտնի են Նալյան Հակոբ պատրիարքը, Մանվել Չպուրճյանը, Բարա Հակոբջյանը, Միհրան Արաբաջյանը (Բիտարի), Հերեբիկ հոջան, որոնք գրող-բանաստեղծ (*Kalem շարագի*) էին: Իսկ երգիչ բանաստեղծ եղած են Ազահին, Ջյուղային, Լիսանին, Սերվերին, Ջյուրյանին, Մահջուրին, Նամին: Վերջինը (սամարթիացի ատահճագործ Հակոբ) նմանը չուներ թե՛ պալատում և թե՛ հրապարակի վրա գտնված աշուղների մեջ: Նա մի տարի հրավեր կարդաց Պոլսի բոյոր աշուղներին, նույնիսկ գրող բանաստեղծներին՝ մրցնան դրւու գալու իր հետ, բայց ոչ մեկը չհամարձակվեց: Մի հոյն աշուղի գոյությունը լսկած չէ:

Ես վերջացրի իմ այս ակնարկը հայոց մշակութային դերի մասին Օսմանյան կայսրության մեջ՝ իին ժամանակներից սկսած մինչև զարդարար Համիդի օրերը: Սա մի բոռուցիկ ակնարկ էր, այո՛ (ես չվերցրի երիտասարդ թուրքերի շրջանը, որ ավելի հետաքրքիր կողմեր ունի), որի յուրաքանչյուր հատվածը կարող է մի ընդարձակ նյութ դառնալ, եթե մեկը ուզենա մանրամասն ուսումնասիրության ենթարկել այն:

**ՀՐԱՎՅԱ ԱՃԱՌՅԱՆ
ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Հրադարակչության վճորեն՝ ՍՈՒՐԵԱ ՄԵՐՏՉՅԱՆ
Հրադարակչության խմբային՝ ՄԱԾՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Նկարիչ՝ ԱՐՍ ԲԱՂԱՍԱՐՅԱՆ
Մրբագրիչ՝ ՆՎԱՐԴԻ ՓԱՐՄԱԿԱՆՅԱՆ
Համակարգչային շարվածք՝ ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Տպագրություն՝ օֆսեթ
Թուրք՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 1,5 տպ. մամուլ
Տպաքանակ՝ 500
Գինը՝ պայմանագրային

«Զանգակ-97» հրատարակչություն,
Երևան, Սահշալ Բաղրամյան 3: հեռ. 56-30-82:

«Զանգակ-97» հրատարակչության տպարան, Երևան, Վարդանանց փակուլի 8:

[400 gr.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0066902

A II
85762

